Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Պատմվածք, Արձակ
13+

Շիրվանզադե
Սկզբունքի մարդը

— Պարոն Բաղդասար, ձեզ համար բացատրելն ավելորդ է: Դուք լուսամիտ մարդ եք, շատ լավ գիտեք՝ ինչ ասել է աղքատ ուսանողի վիճակ: Պարոն Բաղդասար, գոհություն աստծու, դուք միլիոնատեր եք: Տվեք մի աշխատասեր, խելոք, ազնիվ երիտասարդի ուսման վարձը: Նա լավ ապագա է խոստանում: Նա կլինի ազգի օգտակար անդամ: Երդվում եմ կարգովս:

Պարոն Բաղդասարը նստած էր իր շքեղ կաբինետում, որի առաստաղը ծածկված էր յուղաներկով, որի մոդեռն կահ-կարասին Բեռլինից էր բերել տրված և որի պատերի վրա կային մի քանի նշանավոր հայերի պատկերներ:

Պարոն Բաղդասարը նեղն ընկավ: Նրան խնդրում էին անել այն, ինչ որ երկնային պատիժ էր նրա համար — բանալ քսակը: Ողորմած աստված, այդ ինչ աներես ազգ է հայ ազգը: Դեռ մի ամիս չկա՝ նա 25 ռ. ուղարկեց հայուհյաց ընկերությանը, որպեսզի իր անունը տպվի լրագիրներում, և դեռ չի տպվել, ու դարձյալ պահանջում են: Ո՛չ, երբեք, չի կարող տալ: Բայց ինչպես մերժել, քանի որ խնդրողը քահանա է: Չէ՞ որ նա պատարագ անելիս սուրբ սեղանի առաջ կարող է անիծել նրան:

Պարոն Բաղդասարը մտածեց, մտածեց և գտավ ելք:

— Տեր հայր, այդ ուսանողը ձեր ազգակա՞նն է:

— Քրոջս որդին է:

— Տեր հայր, ցավում եմ, որ ձեր քրոջ որդին է:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես սկզբունքով ուսանողներին չեմ օգնում:

— Այդ ի՞նչ սկզբունք է:

— Երախտամոռներին պատմելու սկզբունք: Գիտեք, տեր հայր, ես երախտամոռությունը համարում եմ մեծ անազնվություն: Իսկ հայ ուսանողներն երախտամոռ են: Նրանք հենց որ ավարտում են իրենց ուսումը, իսկույն մոռանում են իրենց բարերարներին:

— Բայց, պարոն Բաղդասար. . .

— Ո՛չ, ո՛չ, մի վիճեք, տեր հայր, ես իմ սկզբունքը խախտել չեմ կարող: Իմ ասածն ասած է: Խնդրեցեք ում համար և ինչի համար կամենաք, բայց ոչ ուսանողների:

— Ներողություն, պ. Բաղդասար, ես ձեր սկզբունքը չգիտեի: Մնացեք բարով:

Հոգևոր հայրը գնալուց հետո պ. Բաղդասարը ուրախացավ, որ քսակի բերանը չբացարավ: Բայց հետո մտածեց, որ չափազանցություն արավ բոլոր ուսանողներին երախտամոռ համարելով: Եվ իսկույն հիշեց իր երախտագիտությունը իր բարերարի վերաբերմամբ: Այդ բարերարը նրա հորեղբայրն էր, որի պատանը վաղուց էր մաշվել: Հանգուցյալը խնամել էր նրան, մեծացրել, հետո ընկերացրել իր գործերին:

— Իսկ ես ի՞նչ արի նրա որդկերանց: Զրկեցի իրանց բաժնից:

Եվ պ. Բաղդասարը իր անցյալի վրա նորից վարագույր գցեց:

Մի շաբաթ անցած՝ եկավ մի ուրիշ այցելու: Այս անգամ աշխարհական:

— Պարոն Բաղդասար, դուք շատ լավ գիտեք՝ ինչ ասել է մամուլ, դուք մեր վաղեմի բաժանորդն եք և մեր գաղափարակիցը: Մեր 25-ամյա լրագիրը, որ այնքան ծառայություններ է մատուցել ազգին, այսօր տպարանին վճարել չի կարողանում: Տվեք գոնե մի հազար ռուբլի, փրկեցեք ձեր սիրած լրագիրը փակվելու վտանգից:

Պարոն Բաղդասարը նստած էր իր փառահեղ սալոնում, որի ոսկեզօծ կահ-կարասին հատկապես ինքն էր պատվիրել Փարիզում Լյուդովիկոս 14-րդի ոճով:

Դարձյալ նեղը գցեցին նրան: Դարձյալ պահանջում են, որ նա քսակի բերանը բաց անի: Ինչպե՞ս մերժել:

Նա մտածեց, մտածեց և գտավ ելք:

— Ներեցեք, ես վճռել եմ սկզբունքով հայ լրագիրներին չօգնել:

— Ինչո՞ւ:

— Որովհետև նրանք միմյանց միսն են ուտում: Նրանք ոչ մի բանում հաշտ չեն իրարու հետ: Ազգը վնասվում է դրանից:

— Բայց դա ուղղությունների տարբերություն է:

— Ոչ, ես ուղղությունների հետ գործ չունեմ: Ազգի շահերը երկուսի համար էլ միևնույնն են: Առաջ հաշտվեցեք, հետո կմտածենք օգնելու մասին:

— Բայց մենք հաշտվել չենք կարող, դա անկարելի է:

— Էհ, որ անկարելի է, ինձ համար էլ անկարելի է իմ սկզբունքի հակառակ բարերարություն անել: Մի՛ նեղանաք, ես ձեզ հարգում եմ. խնդրեցեք ինչի համար և ում համար կամենաք, կտամ, բայց ոչ լրագրի:

— Ինձ համար առայժմ իմ լրագիրն է բռնում առաջին տեղը:

— Համաձայնվեցեք, որ չեմ կարող: Դուք ինքներդ ամեն օր քարոզում եք, թե օրինավոր մարդը չպիտի շեղվի իր սկզբունքից:

— Ճիշտ է, քարոզում եմ:

— Դե ես էլ քարոզին եմ հետևում:

— Մնացեք բարով:

— Դադարեցեք միմյանց միս ուտել, հաշտվեցեք: Դուք միմյանց հայհոյում եք ուղղակի: Ես ի ծննդենե թշնամի եմ հայհոյանքների և վիրավորանքների:

— Մնացեք բարով:

Հյուրը գնաց և պարոն Բաղդասարն այս անգամ երկու ուրախություն զգաց: Նախ՝ որ էլի իր քսակն ազատեց, երկրորդ՝ որ խմբագրին մի լավ խրատեց, պարսավելով փոխադարձ հայհոյանքները. բայց իսկույն հիշեց, որ ինքը օր չի անցնում, որ սրան ու նրան չհայհոյե, մանավանդ իր կնոջը: Եվ այնպիսի հայհոյանքներով, որոնց նմանը նա երբեք չէր կարդացել լրագրերում:

Դարձյալ մի շաբաթ անցած՝ եկավ մի երրորդ հյուր: Այս անգամ պարոն Բաղդասարի վաղեմի բարեկամներից մեկը:

— Գիտես, Բողդան, ես երկար ու բարակ չեմ բացատրի քեզ համար թատրոնի նշանակությունը. փառք աստծու, դու երկար տարիներ ապրել ես Մոսկվայում, Պետերբուրգում, Փարիզում: Դու տեսել ես Եվրոպայի բոլոր թատրոնները: Տեսել ես, թե լուսավորված ազգերը ինչպես են սիրում իրենց ազգային թատրոնները: Ուրեմն թույլ տուր ուղղակի դիմել գործին: Մի խումբ մարդիկ որոշել ենք մեր մայրենի բեմը, որ այժմ ողորմելի դրության մեջ է, ապահովել նյութապես գոնե մի քանի տարով: Արի դու էլ զոհիր մի գումար:

Պարոն Բաղդասարը Փարիզում գնած չինական ընտիր գավաթից սուրճ էր խմում սեղանատանը և հրճվանքով նայում Լոնդոնում ութ հազար ռուբլով գնած բուֆետին՝ հնդկական սև փայտից:

Պարոն Բաղդասարը, գավաթը բերնից չհեռացրած փռթկաց և սուրճը թափեց: Երկար ժամանակ նա չէր կարողանում բուռն ծիծաղը զսպել: Երբ զսպեց, դարձավ իր ազնվաշուք ամուսնուն և ասաց.

— Լսեցի՞ր, Մարո, մեր բարեկամը փող է ուզում հայ թատրոնի համար: Դեհ, դո՛ւ պատասխանիր իմ փոխարեն:

Կարմիր ու կուշտ դեմքով Մարոն, որ լավ կերակրված հնդկահավի էր նման, չգիտեր ինչ պատասխանել: Ասել, որ թատրոնին չի հարկավոր օգնել, կնշանակի հյուրի աչքում երևալ տգետ, անկիրթ: Ասել, որ հարկավոր է օգնել, կնշանակի զայրացնել Բաղդասարին: Իսկ նրա համար չկար ավելի սոսկալի բան, քան զայրացնել մի մարդու, որին ամբողջ քառորդ դար հպատակվել էր հլու ստրուկի պես, հանուն այն թանկարժեք ադամանդների, որոնց պաշտում էր նա: Նա խելացի համարեց երեսի մի կողմով ժպտալ հյուրին, մյուսով նշան անել ամուսնուն, թե բոլորովին համաձայն է նրա հետ՝ ինչ որ էլ ասի:

Պարոն Բաղդասարն ասաց.

— Գիտես, բարեկամս, ես ծիծաղեցի, որովհետև քո առաջարկությունն ինձ համար ծիծաղելի է: Ես հայոց թատրոնին մի կոպեկ անգամ չեմ տա:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես ինձ ճաշակից զուրկ մարդ չեմ համարում: Իմ սկզբունքն է երբեք չօգնել այն գործին, որ լավ չի տարվում: Ձեր թատրոնը թատրոն չէ, այլ բալագան:

— Բայց...

— Այո՛, բալագան է: Դերասանները անկիրթ, կոպիտ, հագնվում են ինչպես ծառաներ: Իսկ դերասանուհիները հագնվում են ինչպես աղախիններ: Այնպես չէ՞, Մարո:

— Ճշմարիտ է:

— Ոչ, բարեկամս, խնդրիր ում համար և ինչի համար, ուզում ես, բայց մի՛ ստիպիր ինձ սկզբունքիս դեմ բան անել: Ես բարերարությունն անում եմ գիտակցաբար...

Հյուրը գնալուց հետո պարոն Բաղդասարը հիշեց, որ իր այժմյան այնքան շքեղ ու ճաշակով հագնված կինը, նույնպես հագնվում էր ինչպես աղախին, այն ժամանակ, երբ ինքը փող չուներ:

Եկան խնդրեցին Էջմիածնի վանքի վերանորոգության համար. պարոն Բաղդասարն ասաց, թե սկզբունքով դեմ է հնությունները պահպանելուն: Ասաց, թե ազգի անցյալը նրան չի հետաքրքրում: Թող խնդրեն նոր, ժամանակակից բաների համար, և նա պատրաստ է օգնել:

Եկան խնդրեցին գյուղական դպրոցների համար. պարոն Բաղդասարն ասաց, թե առաջ պետք է կրթել աղքատ քաղաքացի երեխաներին, հետո գյուղ գնալ:

Եկան խնդրեցին գրականության համար. պարոն Բաղդասարն ասաց, թե բոլոր ազգերի գրականությունները պահվում են առանց կողմնակի նպաստների, թող հայ գրականությունն էլ ինքն իր աշխատանքով ապրե:

Եկան խնդրեցին ուրիշ շատ ու շատ բաների մասին, հիվանդանոցի, որբանոցի, քահանայական գանձարանի, աշակերտական ճաշերի և այլն, և այլն. բոլորի դեմ ցցվեց պարոն Բաղդասարի սկզբունքը:

Մինչև հիմա էլ չկա մեկը, որ պարոն Բաղդասարի սկզբունքը ճանաչի և այնպես խնդրի նրա օգնությունը:

Այնինչ նա միշտ պատրաստ է իր ազգին օգնելու: